ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2026 թվականի N 1029 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ, ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴՐԱՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1069-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով, 25-րդ հոդվածի 6-րդ մասով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում սոցիալական բնակարանային ֆոնդում կացարանով ապահովելու կարգը, պայմանները, շահառուների խմբերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում սոցիալական բնակարանային ֆոնդում կացարանով ապահովելու համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվող և տրամադրվող տվյալների ցանկը, դրանք ստանալու և տրամադրելու կարգն ու տրամադրող մարմինների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման NN 2 և 5 հավելվածներով սահմանված կարգով բնակելի տարածության կարիք ունեցող անձանց (ընտանիքների) հերթացուցակում ներառված (հաշվառված) անձինք (ընտանիքները) պահպանում են իրենց հերթը, անհատույց հիմքով պետական սոցիալական բնակարանային ֆոնդում կացարան ստանալու իրավունքը և սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով անձանց (ընտանիքների) հերթացուցակի հաշվառումից հանելու կամ կացարանի տրամադրման մերժման հիմքերի բացակայության դեպքում՝ կացարանի անհատույց հիմքով տրամադրման պայմանագրերը կնքվում են հետևյալ ժամկետներով՝

ա. միայն 65 տարին լրացած անձից կամ անձանցից բաղկացած ընտանիքների դեպքում՝ անժամկետ,

բ. սույն որոշման 3-րդ կետում նշված անձանց (ընտանիքների) դեպքում (եթե չի հանդիսանում միայն 65 տարին լրացած անձից կամ անձանցից բաղկացած ընտանիք)՝ 3 տարի ժամկետով.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման NN 2 և 5 հավելվածներով սահմանված կարգով սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանի բնակիչների հետ կնքված պայմանագրերը շարունակում են գործել մինչև սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դեպքերում և կարգով պայմանագրերի լուծումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1659-Ա որոշմամբ լուծարված «Հանրակացարաններ» պետական ոչ

առևտրային կազմակերպության շահառուները (բացառությամբ ք. Երևան, Մոլդովական 29/1 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի՝ Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց ժամանակավոր բնակեցման համար օգտագործված հանրակացարանային սենյակներում բնակվող անձանց (ընտանիքների) շարունակում են բնակվել իրենց հատկացված կացարաններում մինչև 2030 թվականի փետրվարի 1-ը, եթե այդ անձանց (ընտանիքների) հետ կնքված պայմանագիրն ավելի վաղ չի լուծվում պայմանագրով սահմանված դեպքերում:

3. Սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձանց (ընտանիքների)՝ սույն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 3-րդ ենթակետի իմաստով կարգավիճակը պահպանված է համարվում՝

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց դեպքում, եթե՝

ա. անձը հաշվառված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման տեղեկատվական համակարգում, և

բ. ընտանիքը Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն.

2) սատարող ընտանիքի դեպքում, եթե ընտանիքը՝

ա. ունի մինչև 18 տարեկան անդամ, և

բ. հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ու անապահովության միավորը բարձր է 0.00 միավորից կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից և ընտանիքի անապահովության գնահատման կարգով անձը (ընտանիքը) ճանաչվել է սոցիալապես անապահով, և

գ. Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն.

3) միածնող ընտանիքի դեպքում, եթե՝

ա. ամուսիններից մեկը մահացել է կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա, և

բ. ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ու անապահովության միավորը բարձր է 0.00 միավորից կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից և ընտանիքի անապահովության գնահատման կարգով անձը (ընտանիքը) ճանաչվել է սոցիալապես անապահով, և

գ. ընտանիքում առկա է առնվազն մեկ երեխա, և

դ. ընտանիքը Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն.

4) միայնակ չաշխատող կենսաթոշակառուի դեպքում, եթե՝

ա. ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ու անապահովության միավորը բարձր է 0.00 միավորից կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից և ընտանիքի անապահովության գնահատման կարգով անձը (ընտանիքը) ճանաչվել է սոցիալապես անապահով, և

բ. ընտանիքի անդամները հանդիսանում են կենսաթոշակառու կամ ծերության կամ հաշմանդամության նպաստ ստացող անձինք, ովքեր չունեն զավակներ կամ ծնողներ կամ ունեն կենսաթոշակի կամ հաշմանդամության կամ ծերության նպաստի իրավունք ունեցող զավակներ կամ ծնողներ կամ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով այլ խնամողներ՝ անկախ աշխատելու հանգամանքից, եթե դրա մասին տալիս են հայտարարություն, և

գ. ընտանիքը Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց (ընտանիքների) դեպքում, եթե՝

ա. ընտանիքի առնվազն մեկ անդամը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստական, և

բ. ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ու անապահովության միավորը բարձր է 0.00 միավորից կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից և ընտանիքի անապահովության գնահատման կարգով անձը (ընտանիքը) ճանաչվել է սոցիալապես անապահով, և

գ. ընտանիքը Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն.

6) հաշմանդամություն ունեցող երեխայով միածնող ընտանիքի կամ ամուսինների հաշմանդամություն ունենալու դեպքում, եթե՝

ա. երեխան ունի հաշմանդամություն և ընտանիքը համարվում է միածնող (ընտանիքը համարվում է միածնող, եթե ամուսիններից մեկը մահացել է կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա) կամ երեխան և ամուսիններն ունեն հաշմանդամություն, և

բ. ընտանիքը Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն.

7) աշխատանքի վետերանի կարգավիճակ կամ 40 և ավելի տարվա աշխատանքային ստաժ ունեցող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամողներ չունեցող տարեց անձանց (ընտանիքների) դեպքում, եթե՝

ա. ընտանիքը բաղկացած է միայն 65 տարին լրացած անձանցից, և

բ. ընտանիքի անդամները հանդիսանում են աշխատանքի վետերանի կարգավիճակ ունեցող կամ 40 և ավելի տարվա աշխատանքային ստաժ ունեցող, և

գ. ընտանիքի անդամները չունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խնամողներ, եթե դրա մասին տալիս են հայտարարություն, և

դ. ընտանիքը Հայաստանի Հանրապետությունում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակության համար նախատեսված բնակելի տարածություն:

4. Սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված անձանց (ընտանիքների) հետ կնքված պայմանագրի ժամկետը լրանալիս առնվազն մեկ ամիս առաջ անձինք (ընտանիքները) կարող են սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով դիմել կացարանով ապահովման համար: Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված շահառուների խմբերին ներկայացվող պայմաններին բավարարելու դեպքում անձինք (ընտանիքները) շարունակում են բնակվել նույն կացարանում՝ սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով, ժամկետներում ու դեպքերում՝ առանց հերթացուցակում հաշվառվելու:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում պետական սոցիալական բնակարանային ֆոնդում առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի և կարգով (ներառյալ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո հատկացված կացարանից դուրս չգալու դեպքում) բնակվող անձինք (ընտանիքները) կարող են սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով դիմել կացարանով ապահովման համար: Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում անձինք

(ընտանիքները) շարունակում են բնակվել նույն կացարանում՝ սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով, ժամկետներում ու դեպքերում:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ինն ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 404-Ն որոշմամբ սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման և վարման լիազորած կազմակերպության միջոցով ստեղծել և ներդնել պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման նոր տեղեկատվական ենթահամակարգը՝ պահպանելով «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի պահանջները.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել պետական սոցիալական բնակարանային ֆոնդի բնակիչների հետ կնքվելիք պայմանագրերի օրինակելի ձևերը.

3) ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1659-Ա որոշմամբ լուծարված «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության շահառուների պայմանագրերի ժամկետների երկարաձգման գործընթացը:

7. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ սույն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը:

8. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը:

9. Պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարման քաղաքականության վերանայման նպատակահարմարության համար սահմանել փորձնական ծրագիր հետևյալ կարգով՝

1) եթե սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում կամ N 1 հավելվածում նշված և հերթացուցակում հաշվառված անձի (ընտանիքի) հերթը հասնելիս ազատ կացարան առկա է միայն քաղաք Արտաշատ, Մռավյան 32/1 հասցեում գտնվող պետական սոցիալական բնակարանային ֆոնդում, ապա անձին (ընտանիքին) առաջարկվում է սույն կետի 3-րդ ենթակետում նշված մատչելի վարձավճարի դիմաց կացարան նշված հասցեում գտնվող պետական սոցիալական բնակարանային ֆոնդում՝ սույն կետում նշված պայմաններով: Անձի (ընտանիքի) կողմից կացարանից հրաժարվելու դեպքում վերջինս պահպանում է իր հերթը և չի հանվում հերթացուցակից.

2) եթե սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում կամ N 1 հավելվածում նշված և հերթացուցակում հաշվառված անձի (ընտանիքի) հերթը հասնելիս առկա է ազատ կացարան ինչպես քաղաք Արտաշատ, Մռավյան 32/1 հասցեում, այնպես էլ պետական սոցիալական բնակարանային ֆոնդի այլ հասցեում գտնվող անշարժ գույքում, ապա անձը (ընտանիքը) իրավունք ունի ընտրելու՝ ստանալու անհատույց հիմքով կացարան պետական սոցիալական բնակարանային ֆոնդի այլ հասցեում գտնվող անշարժ գույքում կամ սույն կետի 3-րդ ենթակետում նշված մատչելի վարձավճարի դիմաց կացարան՝ քաղաք Արտաշատ, Մռավյան 32/1 հասցեում.

3) մատչելի վարձավճարի ամսական չափը հաշվարկվում է հատկացվող կացարանի տարածքի և 1 քառ. մետրի համար հաշվարկվող գումարի արտադրյալի չափով (որին ավելացվում է եկամտային հարկի գումարը)՝ հետևյալ բանաձևով՝ V=A+B+C+D+E,

որտեղ V-ն սոցիալական բնակարանային ֆոնդից անձին (ընտանիքին) տրամադրվող կացարանի 1 քառ. մետրի համար հաշվարկվող արժեքն է արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով: Նշված բանաձևում՝

ա. A-ն անշարժ գույքի մաշվածության ծախսն է, որը հաշվարկվում է շենքի ծառայության տևողությունն ընդունելով 100 տարի հետևյալ բանաձևով՝

A= Q /100 (տարի)/12(ամիս),

որտեղ Q-ն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի N 31-Ն հրամանի հավելվածի մաս 1-ի 27-րդ ու 35-րդ

կետերով սահմանված անշարժ գույքի 1 քառ. մետրի հիմնանորոգման համար նախատեսված երկու արժեքների հանրագումարն է,

բ. B-ն անշարժ գույքի մաշվածության սպասարկման ծախսն է, որը հաշվարկվում է A արժեքի 50 տոկոսի չափով,

գ. C-ն անշարժ գույքի մաշվածության վերականգնման կառավարման ծախսն է, որը հաշվարկվում է B արժեքի 10% չափով,

դ. D-ն անշարժ գույքի՝ հնարավոր ռիսկերից ապահովման (ջրի հոսք, հրդեհ և այլն) ծախսն է, որը հաշվարկվում է վերանորոգված շենքի վրա կատարված ամսական ծախսերի 20% չափով՝ 100 տարվա կտրվածքով հետևյալ բանաձևով.

$$D=A*20\%$$

ե. E-ն անշարժ գույքի վարձավճարի չվճարման ռիսկի համար հաշվարկվող ծախսն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$E= (A+B+C+D)*10\%:$$

4) մատչելի վարձավճարի ամսական չափը չի կարող ավելի լինել, քան ամսական նվազագույն աշխատավարձը.

5) անձի (ընտանիքի) հետ կնքվելիք պայմանագրում սահմանվում է նաև մատչելի վարձավճարի չափը, վճարման կարգը, չվճարման հետևանքները: Մատչելի վարձավճարը վճարվում է անկանխիկ եղանակով՝ առանձնացված հաշվառում վարելու նպատակով բացված նոր հաշվեհամարին.

6) պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կառավարումն իրականացնող կազմակերպությունը՝ մատչելի վարձավճարն ամբողջությամբ ուղղում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը.

7) մատչելի վարձավճարը կարող է վճարվել նաև այլ անձանց և մարմինների կողմից՝ ներառյալ սուբսիդավորման միջոցով.

8) եթե քաղաք Արտաշատում բնակվող և հերթացուցակում հաշվառված անձի (ընտանիքի) համար Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմը պարտավորվում է վճարել մատչելի վարձավճարը բնակության բոլոր ամիսների համար, ապա անձը (ընտանիքը) տեղավորվում է կացարանում արտահերթ՝ առանց սույն

որոշման N 1 հավելվածում նշված համակարգող խորհրդի առաջարկության: Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմը կարող է սույն ենթակետում նշված կարգով տեղավորել իր համայնքում բնակվող բնակչին քաղաք Արտաշատի պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում՝ առավելագույնը նշված ֆոնդի կացարանների ընդհանուր թվի 30 տոկոսի չափով: Սույն ենթակետում նշված դեպքում Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմը դիմում է Արտաշատի տարածքն սպասարկող Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնին: Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնը, Միասնական սոցիալական ծառայության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատու ստորաբաժանումներն իրականացնում են սույն որոշման N 1 հավելվածի 44-րդ կետով սահմանված գործողությունները, որի արդյունքում ընդունվում է Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացված անձին (ընտանիքին) արտահերթ տեղավորման մասին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման կամ առաջարկությունը մերժվում է՝ սույն որոշման N 1 հավելվածի 44-րդ կետով սահմանված դեպքերում.

9) փորձնական ծրագրի շրջանակներում սույն կետում չկարգավորված այլ հարաբերությունները (շահառուների խմբեր, դիմումի ներկայացման, ուսումնասիրության, դիմողին հաշվառելու, հաշվառումից հանելու, կացարանի տրամադրման, կացարանի տրամադրման մերժման, կացարանով ապահովման սոցիալական ծառայության դադարեցման կարգը և պայմանները, շահառուի հիմնական իրավունքները և պարտականությունները) կարգավորվում են սույն որոշման N 1 հավելվածով.

10) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2030 թվականի հունվարի 1-ը ամփոփել փորձնական ծրագրի արդյունքները (շահառուների թիվը, վճարված մատչելի վարձավճարի չափերը, դրանց ծախսման ուղղությունները, ծագած խնդիրները և այլն) և ներկայացնել առաջարկություններ փորձնական ծրագիրը որպես մշտական ծրագիր սահմանելու

կամ փորձնական ծրագիրը շարունակելու նպատակահարմարության բացակայության մասին:

10. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի «Կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման մեկ միավորի արժեքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» N 539-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 614-Ն ու 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ լրացում ու փոփոխություն և 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1516-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1069-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ ենթակետերը և NN 1, 2, 5, 6 հավելվածները:

11. Սահմանել, որ սույն որոշման շրջանակներում ընտանիքին վերաբերող կարգավորումները տարածվում են նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված տնային տնտեսությունների վրա՝ սույն որոշմամբ սահմանված դեպքերում:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

14.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ